Հայտ ներկայացնելու հրավեր
Հայաստանի Հանրապետություն
Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր
Ծրագիր No **P148836**
Մրցույթի համար՝ TIIG-09

1. Հայաստանի Հանրապետությունը ստացել է ֆինանսավորում Համաշխարհային Բանկից Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր իրականացման համար և նախատեսում է գումարի մի մասով իրականացնել **«Կոմունալ նշանակության մեքենա-սարքավորումների մատակարարում Արենի, Միսիան, Ախթալա, Գլաձոր, Եղեգիս համայնքների համար»** պայմանագիրը: Մրցույթը կընթանա Համաշխարհային Բանկի՝ մասնակցելու իրավասության կանոններով և ընթացակարգերով:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը սույնով հրավիրում է իրավասու հայտատուներին ներկայացնել կնքված հայտեր՝

Լոտ 1՝ 1 հատ Համակցված ճանապարհային մեքենա
Լոտ 2՝ 1 հատ Ինքնաթափ մեքենա Ա
1 հատ Ինքնաթափ մեքենա Բ
Լոտ 3՝ 1 հատ Ինքնաթափ մեքենա Գ
1 հատ Ինքնաթափ մեքենա Դ
Լոտ 4՝ 2 հատ Աղբատար մեքենա Ա /հետևի բարձիչով/
1 հատ Աղբատար մեքենա Բ /կողային բարձիչով/
1 հատ Աղբատար մեքենա Գ /կողային բարձիչով/
Լոտ 5՝ 1 հատ Աղբատար մեքենա Դ /հետևի բարձիչով/
Լոտ 6՝ 1 հատ Կոյուղի մաքրող վակումային մեքենա
Լոտ 7՝ 1 հատ Միկրոավտոբուս Ա
Լոտ 8՝ 1 հատ Միկրոավտոբուս Բ
1 հատ Միկրոավտոբուս Գ
Լոտ 9՝ 2 հատ Արտաճանապարհային և տեխսպասարկման մեքենա

Առաքման ժամանակահատվածները կազմում է **75 օր:**
3. Հայտատուները իրավունք ունեն մասնակցել մեկ կամ ավելի մրցույթներին (լոտեր) ինչպես սահմանված է մրցութային փաստաթղթում: Հայտատուները իրավասու են առաջարկել զեղչեր մեկից ավել պայմանագրերին դիմելու դեպքում: Այդ զեղչերը պետք է ընդգրկված լինեն մրցութային հայտում:
4. Մրցույթն անցկացվելու է Ազգային մրցակցային գնման ընթացակարգով Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ փոխառությունների և դրամաշնորհների շրջանակներում Ապրանքների, Աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնում» ուղեցույցի համաձայն («Գնումների ուղեցույց» հունվար, 2011թ., վերանայված Հուլիս 2014 թ.), և հայտ կարող են ներկայացնել բոլոր իրավասու հայտատուները, ինչպես սահմանված է Գնումների ուղեցույցում: Պետք է նաև հաշվի առնել 1.6 և 1.7 կետերը, որոնցով սահմանվում են շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային բանկի քաղաքականությունը:

5. Հայտերը պետք է ներկայացվեն **միայն** էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով ամենաուշը **2020թ-ի ապրիլի 15-ին, ժամը 12:00-ին:** Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում Համակարգի կողմից։

6. Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն «Հայտի ապահովման հայտարարագրով»: Հայտի ապահովման հայտարարագիր պահանջվում է յուրաքանչյուր լոտի համար: